



### DMV-ի նպատակը

Ավտոտրանսպորտային միջոցների վարչության (DMV) հիմնական նպատակներից մեկը բոլոր վարորդների համար լիցենզիաների պահպանումն է, քանի դեռ այն անվտանգ է, ինչպես նաև ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավումը՝ վարորդների իրազեկության բարձրացման միջոցով: DMV-ն ընդունում է, որ վարումն ապահովող անկախությունն ու շարժունակությունը կյանքի որակի կարևոր գործոններ են շատ կալիֆորնիացիների համար:

### DMV-ն ցանկանում է, որ դուք անցնեք

Շատ մարդիկ հանձնում են վարորդական քննություն, երբ նրանք բավականաչափ պատրաստված չեն, չունեն բավարար պրակտիկա կամ ճիշտ պրակտիկա: DMV տեսուչը կվարի ձեզ հետ՝ միայն համոզվելու, որ դուք կարող եք վարել անվտանգ և պահպանել երթևեկության կանոնները:

Ձեր վարորդական քննությունը կտևի մոտ 20 րոպե: Քննությունը բաղկացած է այնպիսի հիմնական գործողություններից, որոնց հետ առնչվել եք վարելիս, ինչպիսիք են՝

- Չափ և աջ շրջապտույտներ:
- Կանգառներ վերահսկվող/անվերահսկելի խաչմերուկներում:
- Ուղիղ գծի վրա հետընթաց մանևրում:
- Անցում այլ գիծ:
- Վարում սովորական փողոցային շարժման ժամանակ:
- Երթևեկություն ավտոմայրուղով (անհրաժեշտության դեպքում):

Ուսումնասիրեք այս գրքույկը և Կալիֆորնիայի վարորդի ուղեցույցը (DL 600): Հանգստացեք և արեք հնարավոր ամեն ինչ:

### Ի՞նչ ակնկալել:

Ակնկալեք, որ ձեզ հետ կվերաբերվեն հարգանքով, արդարությամբ և քաղաքավարությամբ ողջ քննության ընթացքում: Եթե դա այդպես չէ, դիմեք գրասենյակի մենեջերին:

### Ո՞վ է հանձնում վարորդական քննություն:

Վարորդական քննություն պահանջվում է, եթե դուք՝

- Երբեք չեք արտոնագրվել Կալիֆորնիայում կամ որևէ այլ նահանգում, կամ ունեք այլ երկրի վարորդական իրավունք:
- Ունեք տեսողության հետ կապված խնդիր:
- Ոնեք վարորդական իրավունքի սահմանափակ ժամկետ որոշակի ֆիզիկական և հոգեկան պայմանների համար:
- Ունեք ֆիզիկական վիճակ (բազառությամբ ուղղիչ սայնյակների), որի համար DMV-ն սահմանափակում է դնում, կամ Ձեր վարորդական իրավունքի վրա սահմանափակում է դրված եւ ունեք հայցում հեռացնելու սահմանափակումը:
- Ունեք մեկ այլ պետության կրտսեր, ժամանակավոր կամ փորձարարական վարորդական իրավունք:
- Արդեն լիցենզավորվել եք այլ պետությունում, բայց չունեք վարորդական իրավունք ներկայացնելու:

Վարորդական քննությունները վարորդական իրավունքի երկարաձգման կամ այլ երկրի կամ ԱՄՆ տարածքի վարորդական իրավունք ունեցողների համար սովորաբար չեղյալ են համարվում, եթե ներկայացվում է վարորդական իրավունք: Սակայն, DMV-ն կարող է պահանջել վարորդական քննություն ցանկացած պահի:

### Արդյո՞ք նույն չափանիշներն են օգտագործվում վարորդական բոլոր քննություններում:

Ոչ առևտրային C (Հիմնական) դասի վարորդական իրավունքի համար վարորդական քննությունը նույնն է բոլոր վարորդների համար՝ անկախ տարիքից: Չափահաս վարորդը անցնում է նույն տեսակի վարորդական քննություն, ինչպես դեռահաս-վարորդը: Ինչևէ, ֆիզիկական և մտավոր վիճակով վարորդը կարող է հանձնել վարորդական քննության մեկ այլ տարբերակ, որը պարունակում է լրացուցիչ քննական տարրեր:

### Ձեր վարորդական քննությանը պատրաստվելը

- Վարժվեք շատ: Որոշ վարորդներ ավելի շատ պրակտիկայի կարիք ունեն, քան մյուսները: Անչափահասները (մինչև 18 տարեկան) պետք է 50-ժամյա վերապատրաստում անցնեն դեկի մոտ (ընդ որում՝ 10 ժամ գիշեր)՝ նախքան վարորդական քննություն հանձնելը: Երբ դուք պարապում եք, պատկերացրեք, որ դուք անցնում եք վարորդական քննություն: Հանձնարարեք ուղեկցող վարորդին հանգիստ նշել ձեր սխալները: Հարցեր տվեք կոնկրետ վարորդական իրավիճակների մասին, որոնք կարող են շփոթեցնել ձեզ, և ուղղեք ձեր սխալները: Հաջորդ անգամ վարելիս փորձեք ուղղեք բոլոր վարորդական սխալները, որոնք դուք արել եք նախկինում: DMV քննիչը պետք է համոզվի, որ դուք ցույց տվեցիք, որ կարող եք վարել ձեր մեքենան սովորական ճանապարհային իրավիճակներում, այլ ոչ թե խաբի ձեզ: Ձեր վարորդական քննության ընթացքում քննիչը կիմանա, թե ինչպես եք հետևում ճանապարհային երթևեկության կանոններին և ճանապարհային նշաններին և/կամ ազդանշաններին: Երանք կնշեն այլ տարածքներ, որտեղ դուք կարող եք բարելավել:
- Պարապեք անվտանգ վարման խորհուրդները: Ձեր վարորդական հմտությունները բարելավելու համար՝
  - Դեկը վարեք միշտ վստահ:
  - Արագությունն ավելացրեք վստահ: Շարժիչին մեծ արագություն մի տվեք կամ անջատեք այն:
  - Չգուշորեն մեքենան կանգնեցրեք: Սկսեք արգելակումը կանգ առնելուց շատ ավելի շուտ, որպեսզի խուսափեք կտրուկ շարժումից: Իմացեք, որտեղ կանգ առնել: Ուշադիր եղեք հետիոտնային անցումներին: Եթե ձեր տեսողաշար արգելափակված է դեպի հետիոտնային անցումը, զգուշորեն առաջ շարժվեք և նայեք երկու կողմերում՝ նախքան խաչմերուկ մտնելը:
  - Համոզվեք, որ ձեր մեքենան գտնվում է ճիշտ արագության վրա: Հերթափոխեք արագությունները անադմուկ: Մի մոտեցեք կանգառին:

- Միշտ հետևեք սահմանված արագության սահմանափակումներին: Անհրաժեշտության դեպքում նվազեցրեք արագությունը՝ հարմարվելու տվյալ եղանակային, ճանապարհային այլ երթուղիային պայմաններին: Մի մոռացեք միացնել լույսերը, եթե Ձեզ անհրաժեշտ է օգտագործել ապակու մաքրիչներ վատ եղանակային պայմաններում:
- Հետևեք անվտանգ հեռավորության վրա: Օգտագործեք 3 վայրկյանի կանոնը: Ավելացրեք հետևման հեռավորությունը վատ եղանակին կամ վատ տեսանելիության ժամանակ:
- Իմացեք, թե ինչ են նշանակում լուսացույցի նշանները և միշտ հետևեք:
- Միշտ օգտագործեք ճիշտ գիծ և սկսեք շրջադարձը ճիշտ գծից դեպի ճիշտ գիծ:
- Ազդանշանեք գծից գիծ փոփոխությունների և շրջադարձերի ժամանակ:
- Ուշադիր եղեք հնարավոր վտանգներին (նայեք կողքերին) և հաճախ ստուգեք ձեր հայելիները: Միշտ նայեք ճիշտ ուղղությամբ՝ նախքան գծից գիծ փոփոխելը կամ մայրից հեռանալը:
- Վարելու ժամանակ եղեք զգույշ: Կանխատեսել այլ վարորդի սխալները:

Ծանոթացեք հետևյալի հետ՝ Կալիֆորնիայի վարորդի ձեռնարկ (DL 600), Ծնող-դեռահաս ուսումնական ձեռնարկ (DL 603), Անվտանգ վարման գլխավոր ուղեցույց (DL 625), Վարորդական քննության չափանիշները (DL 955) և Նախավարորդական հրահանգներ (անվտանգության չափանիշներ), Վարորդական գործունեության գնահատման նախապատրաստում (DL 956), Վարորդական անվտանգության հրահանգներ, տեսանյութեր և թեստերի օրինակներ, որոնք հասանելի են [dmv.ca.gov](http://dmv.ca.gov) կայքում: Այս ռեսուրսները տրամադրում են մանրամասն հրահանգներ, թե ինչպես պետք է պատշաճ կերպով կատարվի վարորդական գործողությունները, որոնք պահանջվում են վարորդական քննության, օրենքների, երթուղիային կանոնների և անվտանգ վարորդական փորձի համար:

## Քննության այլ ինֆորմացիա

Ձեր անվտանգության համար խնդրեք տեսուչին ցույց տալ ձեր DMV վարորդական իրավունքի նշանը նախքան քննության սկսելը: Միայն տեսուչը կամ DMV անձնակազմից այլ լիազոր իրավունք ունի ներկա լինել ձեր վարորդական քննությանը: Եթե դուք ունեք որևէ հարց, հարցրեք տեսուչին նախքան վարորդական քննության մեկնարկը: Քննության ժամանակ տեսուչը կարող է հարցեր տալ և ուղղություններ, բայց դրանք չեն մտնի ընդհանուր գրույցի մեջ:

Կարևոր է Այնպիսի տեխնոլոգիաներ, ինչպիսիք են ետևի տեսախցիկները և ինքնուրույն ավտոկապայանումը, բացառապես չեն կարող օգտագործվել վարորդական քննության ժամանակ:

## Փորձարկվող մեքենային ներկայացվող պահանջները

Մեքենան, որը դուք օգտագործում եք ձեր վարորդական քննության համար, պետք է անվտանգ լինի վարելու համար: Քննությունից առաջ տեսուչը ստուգում է՝

- 2 պետհամարանիշի առկայությունը: Ետևի համարանիշի վրա պետք է նշված լինի ընթացիկ գրանցումը:
- Գործող առջևի եւ հետևի շրջադարձային և կանգառի ազդանշանները:
- Տրանսպորտային միջոցի համար նախատեսված աշխատող շոցը:
- Անվադողերը առանց ճաղատ բծերի:
- Աղեկվատ արգելակային ճնշումը (Ձեզ կառաջարկվի սեղմել արգելակի ոտնակը, որպեսզի համոզվեք, որ այն աշխատում է ճիշտ):
- Վարորդի կողմից պատուհանը, որը իջեցվում է:
- Առջևի ապակին, որն ապահովում է լիովին անարգել տեսադաշտ ձեզ և տեսուչի համար:
- 2 ետևի հայելին: Մեկը պետք է լինի ձախ կողմում, մեքենայից դուրս:
- Վարորդի և առջևի ուղևորի դռները, որոնք բացվում են ինչպես ներսից, այնպես էլ դրսից:
- Խցիկը, որը հուսալիորեն փակ է:
- Ուղևորի նստատեղը, որը ամուր կցված է մեքենային:
- Աշխատող անվտանգության գոտիները, եթե մեքենան արտադրվել է անվտանգության գոտիներով:
- Գործող վթարային/ավտոկապանման արգելակը:

Ձեզ կառաջարկեն գտնել մեքենայի լուսարձակների, ապակու մաքրիչների, դեֆոստերի և վթարային առկայծալամպերի կառավարման լծակները: Դուք պետք է ցույց տաք, թե ինչպես է ավտոկապանման արգելակը օգտագործվում:

Կարևոր է՝ Վարորդական քննությունը կհետաձգվի, եթե մեքենան չի համապատասխանում վերը նշված պահանջներին կամ եթե դուք հրաժարվում եք օգտագործել անվտանգության գոտին (գոտիները) վարորդական քննության ընթացքում:

## Ֆինանսական պատասխանատվություն

Դուք պետք է ապացուցեք, որ ձեր մեքենան ապահովագրված է պատշաճ կերպով նախքան վարորդական քննությունն սկսելը (կամ քննությունը կհետաձգվի)՝ ապահովելով հետևյալ փաստաթղթերից մեկը՝

- Պատասխանատվության ապահովագրության կամ երաշխիքային պարտատոմսի համարով փաստաթուղթ:
- Սահմանված ռիսկի ապահովագրության քարտը նշանակված ապահովագրական ընկերության անվանմամբ, ֆայլի համարով և ընթացիկ ապահովագրման ամսաթվերով:
- Գործող ապահովագրական գրքույկը կամ ապահովագրական վկայագրի պատճեն՝ ստորագրված կամ վավերացված ապահովագրական ընկերության ներկայացուցչի ստորագրությամբ:
- DMV-ի կողմից տրված ինքնաապահովագրման կամ կանխիկի դեպոզիտի հաստատման վկայականը:
- Գրավոր հաստատում՝ ապահովագրողի կողմից, որ անձը ապահովագրված է:
- Մեքենայի վարձակալության պայմանագիրը (դիմողը պետք է պայմանագրում նշված լինի որպես ապահովագրված վարորդ):

Կարևոր է՝ Եթե վարորդական քննություն անցկացնելու համար օգտագործվում է վարձակալված մեքենա, պայմանագրում պետք է նշված չլինի, որ բացառվում են վարորդական քննությունները:

## Ձեր վարորդական քննությունից հետո

Վարորդական իրավունքի տիրապետումը նշանակում է, որ դուք կատարել եք վարորդական քննության պահանջները: Մակայն, ամենօրյա վարման ընթացքում դուք գործ կունենաք բազմաթիվ իրավիճակների հետ, որոնք դուք չեք հանդիպել ձեր վարորդական քննությանը: Անսպասելի իրավիճակներից դուրս գալու լավագույն միջոցը միշտ նույն անվտանգ վարորդական գործելաձևի օգտագործումն է և պատասխանատու վերաբերմունքը, որը դուք ցույց եք տվել ձեր վարորդական քննությանը: